ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

# ՈՐՈՇՈՒՄ
## Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/8544/02/24 քաղաք Երևան
16 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

## ՊԱՐԶԵՑ

«Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ Ընկերության կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 15.02.2024թ. ներկայացրած պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը (Հավելված N 4) ստորագրել և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ը տրամադրելու, որպես հետևանք՝ պայմանգրի գնի չվճարված 5 տոկոսը, այն է՝ 85 114 722 ՀՀ դրամը վճարել պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն

ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պետք է պահանջել էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 15.02.2024թ. ներկայացրած պայմանագրի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները /Պայմանագիր ծածկագիր ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/19Շ կնքված 02.08.2021թ./:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 15.02.2024թ. ներկայացրած պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը (Հավելված N 4) ստորագրել և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ը տրամադրելու, որպես հետևանք՝ պայմանգրի գնի չվճարված 5 տոկոսը, այն է՝ 85 114 722 ՀՀ դրամը վճարել պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/19Շ ծածկագրով 02.08.2021թ. կնքված Պայմանագրով ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 15.02.2024թ. ներկայացրած պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրության հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

**Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան**

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.16 10:37:38 AMT

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*